ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ (ԱՆՎՃԱՐ) ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ ՈԿՀ-2021 ՄՄԿ

ք. Երևան « 11 » 01 2021 թ.

ՀՀ ոստիկանությունը, ի դեմս ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Վ.Մովսիսյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ Պատվիրատու մի կողմից, և <<ՀՀ ոստիկանության կրթահամալիր>> ՊՈԱԿ-ը, ի դեմս պետ, ոստիկանության գեներալ մայոր Մ. Բաբայանի, որը գործում է ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ Կատարող մյուս կողմից, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1.Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է իրականացնել ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի 09.03.02.01..«Միջին մասնագիտական կրթություն» ծրագրի շրջանակներում <<ՀՀ ոստկանության կրթահամալիր>> ՊՈԱԿ-ի միջին տարեկան թվով 130 սովորողի համար հաշվարկված, ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցման պարտավորությունները:

2.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1. . Սույն պայմանագրով Կատարողին պարտավորությունները կատարելու համար նախատեսված գինը կազմում է 387451200 ( երեք հարյուր ութսունյոթ միլիոն չորս հարյուր հիսունմեկ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ:

2.2. Պատվիրատուն պարտավորությունները կատարելու դիմաց տրամադրված միջոցները վճարում է Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով՝ սույն պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող թիվ 1 հավելվածին համապատասխան:

3.ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԾԱԽՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Կատարողը պետք է ապահովի սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված նպատակների իրականացումը:

3.2 Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

3.3 Կատարողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

4.ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

4.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

4.3 Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| Պատվիրատու | Կատարող |
|---|---|
| ՀՀ ոստիկանություն | <<ՀՀ ոստիկանության կրթահամալիր>> ՊՈԱԿ |
| ք. Երևան, Նալբանդյան 130 | ք. Երևան, Ծովակալ Իսակովի 29 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | ՀՀ ՖՆ գործառնական վարչություն |
| ՀՎՀՀ 01533334 | ՀՎՀՀ 01806293 |
| Հ/Հ 900011159275 | Հ/Հ 900018005018 |
| ՀՀ ոստիկանության պետի տեղակալ | |
| Վ.Մովսիսյան | Պետ Մ.Բաբայան |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված N 1

«11» 01 2021 թ. կնքված

N ՀՀ ՈԿՀ-2021 ՄՄԿ պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

/ հազ.դրամ/

| NN | Ծառայության անվանումը | Ֆինանսավորումը 2021թ. ընթացքում՝ ՀՀ 2021թ. պետական բյուջեից /աճողական կարգով/ | | | | | | | | | | | | Ընդամենը տարեկան |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 |
| 1 | ոստիկանության ծառայողների միջին մասնագիտական կրթություն | 32287,6 | 64575,2 | 96862,8 | 129150,4 | 161438,0 | 193725,6 | 226013,2 | 258300,8 | 290588,4 | 322876,0 | 355163,6 | 387451,2 | 387451,2 |

**Պատվիրատու**

ՀՀ ոստիկանություն
ք.Երևան, Նալբանդյան 130
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
ՀՎՀՀ 01533334
Հ/Հ 900011159275

**Կատարող**

«ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ
ք.Երևան, Իսակովի 29
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018005018
ՀՎՀՀ 01806293

---------------------- Վ.Մովսիսյան
/ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/

---------------------- Մ.Բաբայան
/«ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի պետ/

Կ.Տ

Կ.Տ